

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում գտնվող Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհրդի անդամներին, որ ներկայացնում են Հոլանդիան, Սաուդյան Արաբիան, Արգենտինան, Կանադան, Շվեյցարիան, Ֆինլանդիան և Պակիստանը:

Նորին Սրբությունը, ողջունելով նրանց այցը Մայր Աթոռ, բարձր գնահատեց Համաշխարհային բանկի ծառայությունը հասարակական, սոցիալական ոլորտներում՝ մասնավորապես ընդգծելով ժողովրդի կյանքի բարելավման, երկրների տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման ու խաղաղության հաստատման համար գործադրվող ջանքերը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նաև ՀԲ կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի համար:

Հանդիպման ընթացքում զրուցակիցներն անդրադարձան Եկեղեցի-պետություն հարաբերություններին, խոսվեց աղքատության նվազեցման նպատակով Եկեղեցու կողմից իրականացվող ծրագրերի մասին: